

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

Ուշադրություն! Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասների համար կարող եք դիմել «Ամերիաբանկ» ՓԲԸ Կորպորատիվ և Ներդրումային Բանկինգի դեպարտամենտ, ՓՄՁ վարկավորման բաժին (374 10) 56 11 11 հեռախոսահամարով:

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Կորպորատիվ հաճախորդ հանդիսացող իրավաբանական անձանց առաջարկում է ՓՄՁ հետևյալ վարկատեսակները ստորև նշված հիմնական պայմաններով:
Մանրամասն պայմանները ներկայացված են առանձին աղյուսակներով

	Վարկեր*	վարկային գիծ	օվերդրաֆտ		օնլայն վարկ/օվերդրաֆտ		վերականգնվող էներգետիկայի ոլորտի վարկ		Գնման պատվերի ֆինանսավորում	
Տարեկան տոկոսադրույք օգտագործված մասի համար	ՀՀ դրամ	Սկսած 12%	ՀՀ դրամ	Սկսած 13%	ՀՀ դրամ	Սկսած 13%	ՀՀ դրամ	Սկսած 10.5%	ՀՀ դրամ	Սկսած 16%
	ԱՄՆ դոլար	Սկսած 9%	ԱՄՆ դոլար	Սկսած 10%	ԱՄՆ դոլար	Սկսած 10%	ԱՄՆ դոլար	Սկսած 7.9%	ԱՄՆ դոլար	Սկսած 14%
	Եվրո	Սկսած 8%	Եվրո	Սկսած 9%	Եվրո	Սկսած 8.5%	Եվրո	Սկսած 6.3%	Եվրո	Սկսած 14%
	այլ արժույթներ	Բանկի իրավասու մարմնի որոշմամբ								
	Դրամական միջոցներով ապահովման դեպքում` ավանդի % + 4 %` նույն արժույթի դեպքում ավանդի % + 5 %` տարբեր արժույթի դեպքում									
Տարեկան տոկոսադրույք չօգտագործված մասի համար	կիրառելի չէ	Մինչև 2%	Մինչև 2%				կիրառելի չէ			
Վարկի տրամադրման վճար	0-1.5%	0-1.5%	0-0.5%		0-1%		0-1.5%		0.5%	
Մայր գումարի արտոնյալ շրջան	2-12 ամիս	կիրառելի չէ	կիրառելի չէ		կիրառելի չէ		Մինչև 3 տարի		կիրառելի չէ	
Տոկոսագումարի արտոնյալ շրջան	Կիրառելի չէ									
Տույժեր ժամկետանց գումարի դիմաց**	Տույժ` ժամկետանց վարկի և ժամկետանց տոկոսագումարի 0.13 % չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար									
Վաղաժամկետ մարում**	Պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել ամբողջական վաղաժամկետ մարման վճար, վաղաժամկետ մարվող գումարի մինչև 6 ամսվա տոկոսագումարի չափով /ՀՀ Կառավարության կողմից սուբսիդավորվող գյուղատնտեսական և տավարաբուծության զարգացման վարկերի դեպքում կիրառելի չէ/									

*ՀՀ կառավարության համապատասխան ծրագրերի պահանջներին համապատասխան “Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին”, ինչպես նաև “ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման նպատակով տոհմային խԵԿ-երի ձեռքբերման համար” տրամադրվող վարկերի տարեկան տոկոսադրույքը կազմում է առավելագույնը 12%, որից 9 և 10-12% համապատասխանաբար ԵՆԹԱԿԱ Է ՍՈՒԲՄԻՂԱՎՈՐՄԱՆ ՀՀ կառավարության կողմից՝ ծրագրի պահանջներին բավարարելու դեպքում:

** Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ»,
ԶԳՈՒՇԱՅՈՒՄ՝ ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ԲԱՆԿԸ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԻ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ, ԱՊԱ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

2. ՓՄՁ վարկերի պայմանները

վարկի տեսակը, նպատակը և անվանումը	Փոքր և միջին վարկեր ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման նպատակով	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկեր /ՀՀ կառավարության համապատասխան ծրագրի պահանջներին համապատասխան/	ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման նպատակով տոհմային խնկ-երի ձեռքբերման համար տրամադրվող վարկեր /ՀՀ կառավարության համապատասխան ծրագրի պահանջներին համապատասխան/	Գերմանահայկական Հիմնադրամի "Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար" ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում**	
վարկավորվող գումար	մինչև 1,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթ	Մինչև 1,500,000,000 ՀՀ դրամ	Մինչև 300,000,000 ՀՀ դրամ	Մինչև 500,000,000 ՀՀ դրամ	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո: Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող են տրամադրվել նաև այլ արժույթներով	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	
վարկի տրամադրման ժամկետներ	Մինչև 8 տարի	Մինչև 1 տարի	Մինչև 5 տարի	Մինչև 5 տարի	
մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ	Մինչև 1 տարի	2 – 3 ամիս	մինչև 12 ամիս	Մինչև 1 տարի	
վարկի անվանական տարեկան տոկոսադրույքներ	ՀՀ դրամ	Սկսած 12%	12-14% (ամբողջությամբ սուբսիդավորման հնարավորությամբ) Առավելագույնը 12% (10%-12% սուբսիդավորման հնարավորությամբ) սկսած 9.5%	Առավելագույնը 12% (10%-12% սուբսիդավորման հնարավորությամբ)	սկսած 9.5%
	ԱՄՆ դոլար	Սկսած 9%			
	Եվրո	Սկսած 8%			
	այլ արժույթներ	Բանկի իրավասու մարմնի որոշմամբ			
	Դրամական միջոցներով ապահովման դեպքում	ավանդի % + 4 %՝ նույն արժույթի դեպքում ավանդի % + 5 %՝ տարբեր արժույթի դեպքում			
Վարկի տրամադրման վճար	Մինչև 1 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.5 % վարկի պայմանագրային գումարից 1-ից 2 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.7 % վարկի պայմանագրային գումարից 2 տարուց ավելի մարման ժամկետով վարկեր՝ 0-1.5 % վարկի պայմանագրային գումարից Դրամական միջոցներով ապահովված վարկեր՝ 0 %	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Մինչև 1%	
Վարկի տրամադրման վճարի գանձման եղանակ	Վճարի առկայության դեպքում վերջինս գանձվում է միանվագ՝ վարկի տրամադրման պահին: Բանկի որոշմամբ կարող է սահմանվել վարկի տրամադրման գումարը վճարելու ժամանակացույց, որի առկայության դեպքում վարկը վաղաժամկետ մարելիս վարկի տրամադրման գումարի չվճարված մասը ենթակա է մարման վարկի վաղաժամկետ մարման հետ միաժամանակ կամ Բանկի կողմից սահմանված այլ կարգով:				
Տույժեր ժամկետանց գումարի դիմաց**	Տույժ՝ ժամկետանց վարկի և ժամկետանց տոկոսագումարի 0.13 % չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար				

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

մայր գումարի մարումների հաճախականություն	ամսական, եռամսյակային, կիսամյակային, այլ՝ խառը ժամանակացույցով,	ամսական	ամսական	ամսական
տոկոսագումարների մարումների հաճախականությունը	ամսական			

*** Էներգաարդյունավետ սարքավորումների և մեքենաների ձեռքբերումը, ենթակառուցվածքների կառուցումը և այլ նախագծեր, որոնք օգտագործում են վերականգնվող էներգիայի աղբյուրներ, պետք է կազմեն վարկի գումարի առնվազն 70%-ը: Մնացած 30%-ի չափով կարող են իրականացվել այլ ներդրումներ վարկառուի հիմնական միջոցներում:*

3. ՓՄՁ վարկային գծի, օվերդրաֆտի, Գնման պատվերի ֆինանսավորման պայմանները

վարկի տեսակը, նպատակը և անվանումը	Վարկային գիծ ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման նպատակով		օվերդրաֆտ		Գնման պատվերի ֆինանսավորում		վերականգնվող էներգետիկայի ոլորտի վարկավորում	
վարկավորվող գումար	մինչև 1,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթ		Ոչ ավելի քան բանկային հաշիվներով իրականացվող ամսական միջին շրջանառության 50 տոկոսը՝ առնվազն վերջին 6 ամիսների համար		Պատվերի գումարի մինչև 75%, սակայն ոչ ավել քան 300,000 ԱՄՆ դոլլարին համարժեք գումար		մինչև 1,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթ	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո: Բանկի իրավասու մարմնի որոշմամբ կարող են տրամադրվել նաև այլ արժույթներով							
վարկի տրամադրման ժամկետներ	Մինչև 5 տարի		Մինչև 1 տարի		Մինչև 180 օր		Մինչև 15 տարի	
մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ	Մինչև 1 տարի		Կիրառելի չէ		Կիրառելի չէ		Մինչև 3 տարի	
վարկի անվանական տարեկան տոկոսադրույքներ	ՀՀ դրամ	Սկսած 12%	ՀՀ դրամ	Սկսած 13%	ՀՀ դրամ	Սկսած 16%	ՀՀ դրամ	Սկսած 10.5%
	ԱՄՆ դոլար	Սկսած 9%	ԱՄՆ դոլար	Սկսած 10%	ԱՄՆ դոլար	Սկսած 14%	ԱՄՆ դոլար	Սկսած 7.9%
	Եվրո	Սկսած 8%	Եվրո	Սկսած 9%	Եվրո	Սկսած 14%	Եվրո	Սկսած 6.3%
	այլ արժույթներ	Բանկի իրավասու մարմնի որոշմամբ						
	Դրամական միջոցներով ապահովման դեպքում	ավանդի % + 4 %՝ նույն արժույթի դեպքում ավանդի % + 5 %՝ տարբեր արժույթի դեպքում						
Տարեկան տոկոսադրույք չօգտագործված մասի համար	Մինչև 2%		Մինչև 2%		Կիրառելի չէ			
Վարկի տրամադրման վճար	Մինչև 1 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.5 % վարկի պայմանագրային գումարից 1-ից 2 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.7 % վարկի պայմանագրային գումարից 2 տարուց ավելի մարման ժամկետով վարկեր՝ 0-1.5 % վարկի պայմանագրային գումարից Դրամական միջոցներով ապահովված վարկեր՝ 0 %		0-0.5%		0.5%		Մինչև 1 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.5 % վարկի պայմանագրային գումարից 1-ից 2 տարի մարման ժամկետով վարկեր՝ 0-0.7 % վարկի պայմանագրային գումարից 2 տարուց ավելի մարման ժամկետով վարկեր՝ 0-1.5 % վարկի պայմանագրային գումարից	

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

				Դրամական միջոցներով ապահովված վարկեր՝ 0 %
Վարկի տրամադրման վճարի գանձման եղանակ	Վճարի առկայության դեպքում վերջինս գանձվում է միանվագ՝ վարկի տրամադրման պահին: Բանկի որոշմամբ կարող է սահմանվել վարկի տրամադրման գումարը վճարելու ժամանակացույց, որի առկայության դեպքում վարկը վաղաժամկետ մարելիս վարկի տրամադրման գումարի չվճարված մասը ենթակա է մարման վարկի վաղաժամկետ մարման հետ միաժամանակ կամ Բանկի կողմից սահմանված այլ կարգով:			
Տույժեր ժամկետանց գումարի դիմաց**	Տույժ՝ ժամկետանց վարկի և ժամկետանց տոկոսագումարի 0.13 % չափով կետանցի յուրաքանչյուր օրվա			
մայր գումարի մարումների հաճախականություն	ամսական, եռամսյակային, կիսամյակային, այլ՝ խառը ժամանակացույցով,			
տոկոսագումարների մարումների հաճախականությունը	ամսական			

4. ՓՄՁ-երին տրամադրվող օնլայն վարկ/օվերդրաֆտի պայմաններ

#	Պայմաններ	Դրամական հոսքերով և երաշխավորությամբ ապահովված (D.1.)		Ապահովված անշարժ գույքով կամ տրանսպորտային միջոցով (D.2.)			
1.	Վարկի գումար	D.1. – 1,000,000-10,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ (դոլար, եվրո)		D.2. – 10,000,000-20,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ (դոլար, եվրո)			
2.	Վարկի ժամկետ	1 տարի	3 տարի		5 տարի		
3.	Մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ	Կիրառելի չէ					
4.	Տարեկան տոկոսադրույք*	ՀՀ դրամով վարկերի համար					
		D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 14,5%/15,5%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 13%/14%	D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 15,5%/16,5%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 14%/15%	D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 16,5%/17,5%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 15%/16%
		ՀՀ դրամով ավտոմատ եղանակով հաստատվող D.1 բիզնես վարկի/օվերդրաֆտի դեպքում սկսած համապատասխանաբար 13%-ից (վարկ) կամ 14%-ից (օվերդրաֆտ)					
		ԱՄՆ դոլարով վարկերի համար					
		D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 11,5%/12,5%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 10%/11%	D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 12,5%/13,5%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 11%/12%	D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 13,5%/14,5%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 12%/13%
		ԱՄՆ դոլարով ավտոմատ եղանակով հաստատվող D.1 բիզնես վարկի/օվերդրաֆտի դեպքում սկսած համապատասխանաբար 10%-ից (վարկ) կամ 11%-ից (օվերդրաֆտ)					
				ԵՎՐՈ-ով վարկերի համար`			

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

		D.1. (վարկ/օվերդրաֆտ) - սկսած 10%/11%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 8,5%/9,5%	D.1. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 11%/12%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 9,5%/10,5%	D.1. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 12%/13%	D.2. (վարկ/օվերդրաֆտ) – սկսած 10,5%/11,5%
		ԵՎԴՈ-ով ավտոմատ եղանակով հաստատվող D.1 բիզնես վարկի/օվերդրաֆտի դեպքում սկսած համապատասխանաբար 8,5%-ից (վարկ) կամ 9,5%-ից (օվերդրաֆտ)					
5.	Վարկի տրամադրման վճար (գանձվում է միանվագ՝ վարկի տրամադրման պահին)	Վարկի գումարի 1%-ի չափով Սքորինգի հիման վրա ավտոմատ հաստատվող բիզնես վարկի/օվերդրաֆտի օնլայն դիմելու դեպքում չի կիրառվում					
6.	Տույժեր ժամկետանց գումարի դիմաց**	Տույժ՝ ժամկետանց վարկի և ժամկետանց տոկոսագումարի 0.13 % չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար					
7.	Վարկի մարման եղանակ	Վարկի դեպքում՝ անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ) Օվերդրաֆտի դեպքում՝ մայր գումարի մարումը ժամկետի վերջում					
8.	Վաղաժամկետ մարում	Վաղաժամկետ մարման տուժանք կամ վճար չի կիրառվում					
9.	Վարկի ապահովությունը	D.1 - Հաշիվների շրջանառության գրավ, բիզնեսի հիմնադրի/իրական շահառուի անձնական երաշխավորություն, ինչպես նաև Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն D.2 – ի լրումն D.1-ում նշված ապահովության միջոցների՝ նաև անշարժ գույք՝ կամ տրանսպորտային միջոց					
10.	Վարկ / գրավ հարաբերակցություն	Վարկ/Գրավ հարաբերակցությունը, ըստ յուրաքանչյուր գրավատեսակի, հաշվարկվում է հետևյալ առավելագույն սահմանաչափերով. 1 . անշարժ գույք՝ մինչև 100%, 2. տրանսպորտային միջոց՝ 50% Վարկ/Գրավ հարաբերակցության մեջ որպես վարկի գումար հիմք է ընդունվում հայցվող գումարի 10 մլն ՀՀ դրամը գերազանցող մասի և հաճախորդի գործող անգրավ վարկային պարտավորությունների հանրագումարը: Ընդ որում, եթե հաճախորդի գործող անգրավ վարկային պարտավորությունները գերազանցում են 10 մլն ՀՀ դրամը, ապա Վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկվում է միայն հայցվող վարկի մասով ամբողջությամբ:					
11.	Գրավի ապահովագրություն	Գրավադրվող անշարժ գույքը ապահովագրվում է միայն այն դեպքում, եթե օգտագործվում/օգտագործվելու է ձեռնարկատիրական գործունեության նպատակով: Գրավադրվող անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի/սահմանաչափի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի/սահմանաչափի չափով: Ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները. • Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնող ապրանքներ՝ տոբակի նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր:					

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

		- Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձնեմաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ - Տաքսի ծառայության և վարձով տրվող ավտոմեքենաներ:	
12.	Հայտի ուսումնասիրության և հաճախորդին որոշման մասին ծանուցման ժամկետ	D.1. – ավտոմատ հաստատման դեպքում նույն պահին անմիջապես, հակառակ պարագայում մինչև 2 աշխատանքային օր D.2 - մինչև 3 աշխատանքային օր	
13.	Վավերականության ժամկետ (վարկի տրամադրման մասին որոշման գործողության ժամկետ)	7 աշխատանքային օր	
14.	վարկի տեսակը, նպատակը և անվանումը	վարկ/օվերդրաֆտ ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման նպատակով	

¹ Գույքը պետք է գտնվի Երևանում

5. Վարկավորման համար պահանջվող նվազագույն փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ

Վարկային հայտի ուսումնասիրման և որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթեր		
1.	Վարկի հայտ-դիմում*	
2.	Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ այն դեպքում երբ հաճախորդը հաշվետեր չէ	
3.	Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ և/կամ շարժական գույք, ապրանքանյութական պաշարներ և այլն) սեփականությունը հաստատող փաստաթղթեր (վկայական կամ այլ սեփականությունը հավաստող փաստաթղթեր)	
4.	Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ	
5.	Այլ բանկերում հաշիվների շարժը (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի համար)՝ բանկի քաղվածքի տեսքով	
6.	Իրացման / մատակարարման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ-ապրաքագրեր, վաճառքների կանոնավոր գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր	
7.	Կազմակերպության գործունեության հետ կապված պայմանագրեր՝ վարձակալության, բացառիկ ներկայացուցչական և այլն, (առկայության դեպքում)	
8.	Գրավի առարկայի գնահատման նախնական հաշվետվություն (ըստ անհրաժեշտության), գրավադրվող հողատարածքի գեոդեզիական չափագրումը ²	

² Գեոդեզիական չափագրումը պահանջվում է (բացառությամբ պարսպապատ և տնամերձ հողատարածքների), եթե.

- հաճախորդը դիմել է 50 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկի համար և
- հողատարածքի գրավի դիմաց հաշվարկվող վարկային սահմանաչափի մասնաբաժինը ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափում գերազանցում է 30%: Ընդհանուր հասանելի վարկային սահմանաչափ է համարվում ընդունելի վարկ/գրավ հարաբերակցության սահմաններում Բանկի իրավասու մարմնի որոշմամբ հաճախորդին հասանելի և տվյալ պահին տրամադրման ենթակա վարկային միջոցների հանրագումարը:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

9.	Ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն պետական մարմինների կողմից հաստատված ձևերի, վերջին հաշվետու ժամանակահատվածի համար	
10.	Գործունեության հետ կապված ՀՀ օրենսդրական ակտերով և/կամ բանկի (ռիսկային բնապահպանական գործունեության դեպքում) կողմից պահանջվող բնապահպանական՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, տեխնիկական անվտանգության և այլ փորձաքննարկան եզրակացություններ, ակտեր; տեխնիկատնտեսական հիմնավորումներ	
Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշումից հետո վարկի ձևակերպման և պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ		
1.	Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված դեպքում և կարգով իրավասու մարմնի (Բաժնետերերի/մասնակիցների/ հիմնդիրների ժողովի և/կամ խորհրդի) որոշումը՝ բանկից վարկի և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի (գրավ, երաշխավորություն և այլն) վերաբերյալ գործարքներ կնքելու մասին,	
2.	Տեղեկանք գրանցված բաժնետերերի/մասնակիցների/հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ - ՍՊԸ-ի դեպքում՝ տրված պետ. ռեգիստրի կողմից, - բաժնետիրական և այլ կազմակերպարարական ձևի իրավաբանական անձի դեպքում՝ տրված պետական դեպոզիտարիայի կողմից, իսկ տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ՝ տրված պետ. ռեգիստրի կողմից	
3.	Գրավի ձևակերպման համար՝ Անշարժ գույքի դեպքում միասնական տեղեկանք տրված ՀՀ պետական Կադաստրի համապատասխան տարածքային ստուրաբաժանման կողմից	
4.	Գրավի առարկայի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում) - Անշարժ գույքի դեպքում՝ սեփականության վկայականի մեջ նշված սեփականության իրավունքի հիմքը հավաստող փաստաթղթեր: - Շարժական գույքի սեփականության իրավունքի ծագման հիմքը հավաստող փաստաթղթեր: - Գրավատուների մասին տվյալներ (եթե միաժամանակ վարկառու չեն)՝ - Ֆիզիկական անձանց դեպքում՝ - անձնագրերի պատճենները, - Ամուսնացած լինելու դեպքում՝ ամուսնության վկայական և ամուսնու անձնագիր, վերջինիս մահացած լինելու դեպքում՝ ամուսնու մահվան վկայական, - Ամուսնացած չլինելու դեպքում՝ - տեղեկանք՝ ՔԿԱԳԳ-ի արխիվից կամ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից ամուսնության բացակայության մասին, կամ հայտարարություն վավերացված նոտարի կողմից ամուսնության բացակայության մասին - ամուսնալուծված լինելու դեպքում՝ ամուսնալուծության վկայական - իրավաբանական անձ հանդիսացող գրավատուի՝ կանոնադրությունը, ռեգիստրի վկայականը, տնօրենի անձնագրի պատճենը, ինչպես նաև սույն բաժնի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:	
5.	Գրավի առարկայի գնահատման հաշվետվություն (ըստ անհրաժեշտության)	
6.	Գրավի առարկայի ապահովագրության վկայագիր/պայմանագիր (ըստ պահանջի)	
7.	Գործունեության հետ կապված ՀՀ օրենսդրական ակտերով պահանջվող բնական ռեսուրսների օգտագործման և այլ բնապահպանական պայմանագրեր, թույլտվություններ, վկայականներ, վկայագրեր, լիցենզիաներ և նմանատիպ փաստաթղթեր	

Գործի առանձնահատկություններից ելնելով, անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր

6. Այլ դրույթներ

Վարկերի տրամադրում

Վարկի ձևակերպումը կատարվում է Բանկի մասնաճյուղերում:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Վորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

Վարկի գումարը տրամադրվում է անկանխիկ:

Հաճախորդի ցանկությամբ վարկը, վարկային գիծը, օվերդրաֆտը, պայմանագրի/ պատվերի ֆինանսավորումը կարող են տրամադրվել ցանկացած ողջամիտ նվազագույն ժամկետով, որը սովորաբար մեկ ամիս է:

Վարկերի ապահովվածություն

ՓՄՁ վարկերը տրամադրվում են դրամական միջոցների, դրամական հոսքերի, անշարժ գույքի, շարժական գույքի, երաշխիքների, երաշխավորությունների, բաժնետոմսերի, պայմանագրի կամ այլ իրավունքի գրավի ապահովվածությամբ:

Վարկ/գրավ հարաբերակցության առավելագույն գործակիցներն են՝

ա) անշարժ գույքի դեպքում՝ մինչև 96 ամիս ժամկետով վարկերի պարագայում գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 80 տոկոսը, եթե վարկառուի պարտքի սպասարկման գործակիցը կազմում է 1.5 և ավել ապա 90%, 96 ամիս ժամկետը գերազանցող վարկի պարագայում (բացառությամբ էներգետիկայի ոլորտի վարկերի) գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 70%,

բ) շարժական գույքի դեպքում՝

- եթե վարկառուի ՊՄԳ ցուցանիշը կազմում է 1.5 և ավել և վարկի ժամկետը չի գերազանցում 96 ամիսը, ապա 60 տոկոսը,

- նոր ձեռքբերվող կամ վարկային հայտի ներկայացման ամսաթվին նախորդող վեց ամիսների ընթացքում ձեռքբերված շարժական գույքի՝ մինչև 80 տոկոսը մինչև 96 ամիս վարկերի պարագայում

գ) ապրանքանյութական պաշարների (պատրաստի արտադրանք, հումք-նյութեր և այլն) դեպքում՝ գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 30 տոկոսը, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 40 տոկոսը,

դ) դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավել քան բանկային հաշիվներով իրականացվող առնվազն վերջին 6 ամիսների առավելագույնը վերջին 12 ամիսների միջին ամսական շրջանառության 50 տոկոսը,

ե) բաժնեմասերի դեպքում՝

- գործող բիզնեսի բաժնեմասերի պարագայում գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 80 տոկոսը

- դեռևս չգործող բիզնեսի բաժնեմասերի պարագայում՝ գրավի առարկայի գնահատված արժեքի մինչև 60%:

Վարկերի տոկոսադրույքների հաշվարկման կարգը

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա՝ վարկի նվազող մնացորդի նկատմամբ: Որպես բաժանարար հիմք է ընդունվում տարին 365 օր: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է այն որոշող պայմանների հիմքով, կրում է կողմնորոշող բնույթ և կարող է Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կապված Վարկառուի կողմից Վարկը Պայմանագրով սահմանված ժամկետներից շուտ մարելուց, ինչպես նաև դրանց հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A - կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը/

n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn –կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն

ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i – տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են

կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

Տոկոսագումարի հաշվարկի ներկայացուցական օրինակ

Վարկի սկզբնական գումար – 7,000,000 ՀՀ դրամ
Վարկի տարեկան տոկոսադրույք – 15%
Վարկի ժամկետ – 60 ամիս

Օրական հաշվեգրվող տոկոսագումարը կկազմի 7,000,000*15/100/365=2,876.7

Վարկային գծի/օվերդրաֆտի դեպքում տոկոսադրույքը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ օգտագործված մասի նկատմամբ, իսկ չօգտագործված մասի նկատմամբ կարող է կիրառվել տոկոսադրույք:

Անվանական տոկոսադրույքի փոփոխություն

Բանկն իրավունք ունի պայմանագրի գործողության ընթացքում միակողմանի փոփոխել -տոկոսադրույքի և ֆակտորինգի տրամադրման միանվագ վճարի չափը՝ հիմնվելով ֆինանսական շուկայից Բանկի ներգրավված և/կամ շուկայում տեղաբաշխած միջոցների տոկոսադրույքների տատանումներից և/կամ եթե ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել ֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները, այդ մասին 30 օր առաջ նախապես տեղեկացնելով հաճախորդին:

Արտարժույթով տրամադրվող վարկեր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! **Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:**

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ արտարժույթով վարկերի մարումները կատարվում են տվյալ Վարկի արժույթով հաշվից, իսկ դրա վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև ցանկացած արժույթով այլ հաշիվներից, ընդ որում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով, ուստի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված տվյալ արժույթի փոխարժեքի մեծության փոփոխությունից,

Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը

Բանկը վարկը հաստատելու վերաբերյալ որոշումը կայացնում է հաճախորդի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը որոշման մասին հաճախորդին տեղեկացնում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրով նախատեսված ապահովման պայմանագրերի կնքված լինելու դեպքում: Ընդ որում գույքի գրավադրման դեպքում վարկը վարկառուին տրամադրվում է գրավի պայմանագրերի՝ Բանկի համար ընդունելի ձևով ձևակերպելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելուց, գրավի առարկաները Բանկի պահանջով վերջինիս հետ համագործակցող ապահովագրական ընկերության միջոցով ապահովագրելուց, ինչպես նաև վարկի տրամադրման այլ պայմանները վարկառուի կողմից կատարվելուց 1 (մեկ) աշխատանքային օր հետո:

Հաճախորդի վարկի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ՝

- Ֆինանսական դրություն
- Բանկային/Վարկային պատմություն
- Ապահովվածություն
- Կառավարման որակ
- Բիզնես միջավայր
- Փոխկապակցված անձանց գործունեություն և վարկային պատմություն և այլն

Վարկերի մերժման գործոնները՝

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները (փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը) անարժանահավատ են կամ ոչ ամբողջական,
- Վարկառուի եկամուտներն անբավարար են պարտավորությունների մարման համար,
- Վարկառուն ունի վատ վարկային պատմություն, ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ (այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ):

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

Գույքով ապահովված վարկատեսակների դեպքում անհրաժեշտ վճարները

Գրավադրվող անշարժ կամ շարժական գույքը պարտադիր գնահատվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից՝ հաճախորդի ընտրությամբ: Գույքի գնահատման արժեքը կազմում է 7,000 -30,000 ՀՀ դրամ՝ կախված գույքի տեսակից: Առանձին դեպքերում խոշոր գույքի գնահատման վճարը սահմանվում է պայմանագրային հիմունքներով:

Անշարժ գույքի և տրանսպորտային միջոցի գրավադրմամբ վարկավորման համար վարկառուի կողմից պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկը և դրանց չափը (միջակայքը).

- նոտարական վճար – միանվագ 14,000-16,000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում,
- նոտարական վճար – միանվագ 13,000-20,000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի գրավադրման դեպքում,
- նոտարական վճար – միանվագ 13,000-18,000 ՀՀ դրամ՝ հիմնական միջոցների գրավադրման դեպքում
- միասնական տեղեկանք (անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ) – 10,000 ՀՀ դրամ,
- անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական – 26,000 ՀՀ դրամ,
- ՀՀ Ոստիկանության վճար (արգելանքի և շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ 5,000 ՀՀ դրամ:
- Ապահովագրությունը կատարվում է համապատասխան մասնագիտացած կազմակերպության կողմից, գանձելով միջնորդավճար, համաձայն տվյալ կազմակերպության կողմից սահմանված սակագների և դրույքների, որոնք կարող են փոփոխվել կախված շուկայի իրավիճակից: Ապահովագրավճարները տատանվում են հետևյալ միջակայքում՝

Ապահովագրավճար	Վարկի գումարից %
Անշարժ գույք	0.15-0.25
Սարքավորումներ	0.2-0.35
Շրջանառու միջոցներ	0.3-0.5
Ավտոմեքենա	2.5

Բանկը պահանջում է ապահովագրություն իրականացնել առնվազն վարկի մնացորդի չափով, իսկ համապատասխան գույքն ամբողջ արժեքով ապահովագրելիս ապահովագրական ընկերությունն է որոշում՝ հիմք ընդունել գույքի շուկայական, թե՛ իրացվելի արժեքը:

Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկ:

Ապահովագրական ընկերություն	Հասցե	Հեռ.
«Նաիրի Ինշուրանս» ԱՄԴԸ	ք. Երևան, Վ. Սարգսյան 10, տարածք 110 («Պիացա Գոռնդե» Բիզնես Կենտրոն)	(+37460) 500060
«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պող. 1	(+37410) 591010
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50	(+37410) 592121
«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/1	(+37460) 275757

Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների ցանկ

Գնահատող ընկերություն	Հասցե	Հեռ.
«Կոստ Կոնսալտ» ՍՊԸ	ք. Երևան, Բուզանդի 1	+374 77 471925, +374 91 471925
«Ֆինլոու» ՍՊԸ	ք. Երևան, Նալբանդյան 50, 3 բնակարան	(+374 10) 50 60 00 (+374 60) 74 74 00 (քջ.) (+374 91) 91 11 55 (քջ.) (+374 77) 78 05 10 (քջ.)
«Վի Էմ-Ար Փի» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փակ. 8, թիվ 3	(+374 10) 58 87 97

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB SM 72-04
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող ՓՄՁ վարկերի համար		Խմբագրություն 1
		Ուժի մեջ է՝ 15.01.2020թ.-ից

«Բիլիվ» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի պող., 9-14 շենք	(+374 94) 22 11 11 (քջջ.)
«Ինեքս» ՍՊԸ	ք. Երևան, Օրբելի Եղբայրներ 45/403	(+374 77) 51 81 16 (քջջ.) (+374 55) 51 81 15 (քջջ.) (+374 41) 04 22 87 (քջջ.)
«Ֆոր Սմարթ Կոնսուլտ» ՍՊԸ	ք. Երևան, Գյուլբենկյան փ. 30/3/128 տ.	(+374 11) 27 76 67 (+374 91) 17 76 67 (քջջ.) (+374 41) 17 76 67 (քջջ.) (+374 98) 17 76 67 (քջջ.)

Նշված տեղեկություններին կարող եք ծանոթանալ նաև Ամերիաբանկ ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.ameriabank.am, ինչպես նաև ստորև նշված կոնտակտային տվյալներով:

Տարաբնույթ հանգամանքներից ելնելով Բանկի կողմից կարող է պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանք պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն:

Քաղվածքներ: Վարկային հաշիվների բաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Քաղվածքները տրամադրվում են փոստային հասցեով, Էլեկտրոնային փոստով «Ինտերնետ-Բանկ» համակարգի միջոցով, կամ առձեռն՝ բանկի ցանկացած մասնաճյուղից:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0015, Վազգեն Սարգսյան 2

Հեռ.՝ (374 10) 56 11 11

Ֆաքս՝ (374 10) 51 31 33

Էլ. հասցե՝ office@ameriabank.am; www.ameriabank.am